Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» ՊՈԱԿ գիտական խորհրդի
2015 թվականի նոյեմբերի 10-ի նիստում,
արձանագրություն N 2,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

Կ. Լ. Աթոյան

«_____» _____ 2015 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետը (այսուհետ՝ ֆակուլտետ) Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ համալսարան) կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր կանոնադրությանը համապատասխան կրում է իրավունքներ և պարտականություններ, իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն վիճակագրություն, մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ, կառավարման տեղեկատվական համակարգեր (այդ թվում ըստ մասնագիտացումների՝ էլեկտրոնային բիզնես, էլեկտրոնային կառավարում) մասնագիտություններով:

2. Ֆակուլտետի կանոնադրությունը մշակվել է համալսարանի ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա և հաստատվում է համալսարանի գիտական խորհրդում:

3. Սույն կանոնադրության մեջ փոփոխությունները և լրացումները կատարվում են համալսարանի գիտական խորհրդի կողմից:

4. Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմակերպվում կամ դրա գործունեությունը դադարեցվում է համալսարանի խորհրդի որոշմամբ:

5. Ֆակուլտետի կանոնադրության և ֆակուլտետի օրինակելի կանոնադրության դրույթների միջև հակասության առկայության դեպքում գործում են օրինակելի կանոնադրության դրույթները:

6. Ֆակուլտետի պաշտոնական անվանումն է՝

1) հայերեն՝ Ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետ.

2) ռուսերեն՝ Факультет информатики и статистики.

3) անգլերեն՝ Department of Computer Science and Statistics.

7. Ֆակուլտետի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, 0069, Պարույր Սևակի 77:

8. Ֆակուլտետը գործում է համալսարանի և ֆակուլտետի կանոնադրությունների հիման վրա, իր գործունեության ընթացքում ղեկավարվում է համալսարանի կանոնադրությամբ, իր կանոնադրությամբ, համալսարանի կառավարման մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

9. Ֆակուլտետը կարող է ունենալ իր անվանմամբ դրոշմակնիք՝ (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով), պաշտոնաթուղթ (բլանկ), խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

10. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից, լաբորատորիաներից և ուսումնական, գիտական ու օժանդակ այլ ստորաբաժանումներից:

Ֆակուլտետի ամբիոններն են՝

1) Վիճակագրության ամբիոն.

2) Տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոն.

3) Տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոն:

II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

11. Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ, եթե դրանք չեն հակասում համալսարանի կանոնադրությանը, իր կանոնադրությանը, համալսարանի կառավարման մարմինների, ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերին, ինչպես նաև այլ իրավական ակտերին:

12. Ֆակուլտետը, ելնելով իրականացվող մանկավարժական, գիտական, ուսումնաօժանդակ աշխատանքներից, ըստ սահմանված չափանիշների՝ մշակում է իր հաստիքացուցակը, որը հաստատում է համալսարանի ռեկտորը:

III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

13. Ֆակուլտետի կառավարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, համալսարանի կանոնադրությանը և ֆակուլտետի կանոնադրությանը համապատասխան:

14. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը:

15. Ֆակուլտետի խորհուրդը կազմված է ի պաշտոնե և ընտրովի անդամներից: Խորհրդի ի պաշտոնե անդամների թիվը չի կարող գերազանցել խորհրդի կազմի 50 տոկոսը:

16. Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են ֆակուլտետի դեկանը, տեղակալները, ամբիոնների վարիչները: Խորհրդի ընտրովի անդամների թեկնածությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Խորհրդի ընտրովի անդամներ կարող են

առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները:

17. Խորհրդի անդամների 25 տոկոսը սովորողներն են (ուսանողներ), որոնց ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:

18. Ֆակուլտետի խորհրդի անդամների թիվը և կազմը հաստատում է համալսարանի ռեկտորը:

19. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր կազմը:

20. Ֆակուլտետի խորհուրդը քննարկում է ֆակուլտետի կանոնադրությունը և այն ներկայացնում համալսարանի գիտական խորհրդի հաստատմանը, լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում նրա գործունեությունը:

21. Ֆակուլտետի խորհրդի կազմի (որպես կառավարման մարմին) ձևավորման ու գործունեության կարգը սահմանվում է ֆակուլտետի կանոնադրությամբ: Խորհրդի նախագահը ֆակուլտետի դեկանն է:

22. Ֆակուլտետի խորհուրդը՝

1) ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և այլ կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, գործունեությունը դադարեցնելու և վերակազմակերպելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում համալսարանի ռեկտորին.

2) լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտահետազոտական աշխատանքի, միջազգային կապերի և այլ գործունեության հարցերը.

3) համալսարանի գիտական խորհրդին ներկայացնում է առաջարկություններ պատվավոր կոչումներ շնորհելու, համալսարանի մրցանակներ, անվանական կրթաթոշակներ տալու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածուներ ներկայացնելու վերաբերյալ.

4) համալսարանի ռեկտորին առաջարկություն է ներկայացնում ֆակուլտետի գիտամանկավարժական աշխատողի աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո նրա հետ նոր աշխատանքային պայմանագիր կնքելու վերաբերյալ.

5) ֆակուլտետից առաջադրում է համալսարանի խորհրդի և գիտական խորհրդի անդամության թեկնածուներ.

6) քննարկում է ֆակուլտետի ամբիոնների ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները.

7) քննարկում է ֆակուլտետի կիսամյակային և տարեկան քննաշրջանների արդյունքները.

8) լսում է ֆակուլտետում կատարվող գիտական թեմաների վերաբերյալ հաշվետվությունները.

9) լուծում է սույն կանոնադրությունից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

23. Ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել են նրա անդամների թվի ոչ պակաս, քան 2/3-ը:

24. Ֆակուլտետի խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան ամիսը մեկ ամգամ, իսկ արտահերթ նիստերը հրավիրվում են դեկանի կամ խորհրդի անդամների 1/3-ի մասնակցությամբ:

25. Ֆակուլտետի խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, վայրը, նիստին մասնակցող անդամների անվանացանկը, օրակարգի հարցերը, ելույթների հակիրճ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները և ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և քարտուղարը, ովքեր պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար: Նիստի օրակարգը և ընդունված որոշումները հինգ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա են հրապարակման համալսարանի ինտերնետային կայքում:

26. Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ղեկավարության, աշխատողների, ուսանողների, ասպիրանտների, դոկտորանտների և հայցորդների համար:

27. Ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ֆակուլտետի դեկանը՝ իր իրավասությունների սահմաններում և սույն կանոնադրությանը համաձայն: Դեկանն ընտրվում է համալսարանի գիտական խորհրդի սահմանած կարգով, գիտական խորհրդի կողմից՝ 5 տարի ժամկետով: Ռեկտորը դեկանին պաշտոնի է նշանակում իր հրամանով՝ քվեարկության արդյունքների հիման վրա:

28. Ֆակուլտետի դեկանը՝

1) ղեկավարում է ֆակուլտետի կրթական (ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպական), գիտական, արտադրական, միջազգային, ընթացիկ և այլ գործունեություն.

2) ապահովում է ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը.

3) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների, ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածուներին.

4) սահմանված կարգով համալսարանի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ ուսանողներին ավարտելու, կուրսում թողնելու, հեռացնելու, վերականգնելու, համապատասխան արձակուրդ ձևակերպելու վերաբերյալ.

5) կազմակերպում է ուսումնական դասացուցակների կազմումը և վերահսկում է դրանց պատշաճ կատարումը.

6) վերահսկում է քննությունների և ստուգարքների անցկացման գործընթացը.

7) լուծում է ֆակուլտետի կանոնադրությունից բխող և ֆակուլտետի ուսումնամեթոդական, ուսումնակազմակերպական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր.

8) իրականացնում է համալսարանի, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով նախատեսված գործառույթներ, կատարում է ռեկտորի հանձնարարականները.

9) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի խորհրդի կազմում կատարվող ընթացիկ փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունները:

29. Դեկանն ունի տեղակալ(ներ), որին (որոնց) դեկանի ներկայացմամբ նշանակում է ռեկտորը:

IV. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

30. Ամբիոնը համալսարանի ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է համալսարանի կանոնադրության և ֆակուլտետի կանոնադրության հիման վրա: Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում են պրոֆեսորներ, դոցենտներ, ասիստենտներ ու դասախոսներ:

31. Ամբիոնը մշակում է ամբիոնի աշխատողների հաստիքացուցակը՝ ֆակուլտետի հաստիքացուցակի շրջանակներում, ելնելով կատարվող մանկա-վարժական, գիտական և ուսումնաօժանդակ աշխատանքների ծավալից ու ձևերից՝ ըստ սահմանված չափանիշների:

32. Ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմի աշխատանքի ընդունումը, կազմի և համալսարանի միջև աշխատանքային հարաբերություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով, որոնց նախորդում է պաշտոնի հավակնորդի՝ մրցութային կարգով ընտրությունը:

33. Ամբիոնը ղեկավարում է վարիչը, ով ընտրվում է բաց մրցույթով՝ մինչև 5 տարի ժամկետով՝ համալսարանի գիտական խորհրդի սահմանած կարգով: Ամբիոնի վարիչն ընտրվում է համալսարանի գիտական խորհրդում: Ընտրությունների արդյունքների հիման վրա ամբիոնի վարիչին պաշտոնի է նշանակում ռեկտորը և նրա հետ կնքում աշխատանքային պայմանագիր:

34. Ամբիոնի վարիչը կազմակերպում և ղեկավարում է ամբիոնի ուսումնական, գիտական, կազմակերպական և այլ աշխատանքները, ներկայացնում է նրա կոլեկտիվը

համալսարանի ֆակուլտետի, համալսարանի այլ ստորաբաժանումների, ինչպես նաև այլ կազմակերպությունների հետ հարաբերություններում:

35. Ամբիոնների աշխատանքներն իրականացվում են ամբիոնների աշխատանքային ծրագրերին համապատասխան:

36. Ամբիոնի ուսումնական, գիտական, կազմակերպական հիմնական հարցերը քննարկվում են ամբիոնի գիտամանկավարժական կազմի նիստերում: Ամբիոնի մյուս աշխատողներն այդ նիստերին մասնակցում են խորհրդակցական ձայնի իրավունքով:

37. Ամբիոնի նիստերը հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարեկան ութ անգամ:

38. Ֆակուլտետի դեկանատը դեկանի ղեկավարությամբ գործող մարմին է:

39. Ֆակուլտետի խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ֆակուլտետին առնչվող ընթացիկ հարցերը քննարկվում են և լուծվում դեկանատի ընդլայնված նիստում, որին մասնակցում են դեկանը, դեկանի տեղակալը (տեղակալները), ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչները և ըստ անհրաժեշտության՝ այլ աշխատողներ և ուսանողներ: Դեկանատի ընդլայնված նիստերն արձանագրվում են:

40. Դեկանատը վերլուծում է ամբիոնների կողմից կատարված աշխատանքի ընթացքն ու արդյունքները և մշակում որոշակի առաջարկություններ այդ աշխատանքների կատարելագործման վերաբերյալ: